ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐՑԱԽԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԲԵՄՈՒՄ

ԼՂՀ-ում առկա խնդիրները, այդ թվում՝ տեղեկատվական բնույթի, զգալիորեն շաղկապված են երկրի ներկայիս քաղաքական կացության հետ, երբ միջազգայնորեն ճանաչված չէ հանրապետության անկախությունը և առկա է Ադրբեջանի կողմից ռազմական սպառնալիք: 1988 թվականից այսդին Արցախը գտնվում է հակառակորդ (թշնամի) պետության հետ ոչ միայն քաղաքական ու զինական դիմակայությունում, այլև ներքաշված է տեղեկատվական իսկական պատերազմի մեջ: Այդ երևույթը հաճախ է քննարկման առարկա դառնում ինչպես տեղական, այնպես էլ հայաստանյան լրատվամիջոցների ու փորձագետների համար: Խնդիրը դիտարկենք մեր տեսանկյունից՝ համադրելով նաև հրապարակի վրա գոյություն ունեցող ուշագրավ արձանագրումներն ու որոշ եզրակացություններ: Մենք հիմնականում կանգ կառնենք անկախության տարիների իրողությունների վրա:

Ավելի ուշադիր զննելով անցյալը՝ փաստում ենք, որ ղարաբաղաադրբեջանական հակամարտությունը պատմական խորքեր ունենալով՝ միշտ էլ ուղեկցվել է քարոզչական գործողություններով՝ գաղտնի, թե ակնհայտ: Դրանք շարունակաբար առկա էին թե մինչխորհրդային, թե խորհրդային ժամանակաշրջանում: Ուստի, երբ նշում ենք, թե Արցախի ու Ադրբեջանի (նրա կողմնակիցներով հանդերձ) միջև տեղեկատվական պատերազմը սկիզբ է առնում 1988 թվականին՝ նկատի ենք առնում այդ դիմակայության նոր և առավել բացահայտ ու թեժ շրջանը: Թեև այնքան էլ պասիվ չէր խորհրդաադրբեջանական հակաղարաբաղյան քարոզչությունը ևս, երբ Բաքվի պարբերականները տասնամյակներ շարունակ «պատմագիտական» նյութեր էին հրապարակում Արցախի՝ «ադրբեջանական բնիկ տարածք» լինելու վերաբերյալ: Երկարատև տեղեկատվական արշավը եղավ արցախահայության հանդեպ կիրառված այն թունավոր սրսկումներից մեկը, որ նրան մղեց հիմնավորապես հակագդելու դրան՝ փրկելով իր գոյությունն ու ինքնությունը:

ԼՂ-ի հարցում Ադրբեջանը նպատակային տեղեկատվական քաղաքականություն է վարում վաղուց, որն ինքնին տեսանելի սպառնալիք է, իսկ մասնագիտական աչքով «տեսագրվում» է տվյալ և նմանատիպ այլ երևույթների առանձնահատուկ խորքային կազմաբանությունը. «... Տեղեկատվական պատերազմի յուրահատկությունն այն է, որ հանրային խմբերի, ժողովուրդների

գիտակցության մեջ ներարկում են գաղափարներ, որոնք ուղղորդում կամ կանխորոշում են հասցեատերերի գործողությունները: Վտանգավոր իրողություն, որը սթափ պետք է պահի հատկապես փոքրաթիվ ժողովուրդներին և փոքր պետություններին» (Նաղաշ Մարտիրոսյան. «Տեղեկատվական պատերազմներ. անցյալը և ներկան», «Ժուռնալիստիկա. տեսության և պատմության հարցեր», պրակ Ժ, Երևան, ԵՊՀ հր., 2009թ., էջ 26):

Կանխապես արձանագրենք, որ տեղեկատվական ուղղորդված, անգամ լիովին համակարգված գործողությունները հաճախ չեն տալիս ցանկալի արդյունքներ իրենց հիմնագուրկ, կեղծ ու արհեստական գաղափարական հենք ունենալու պատճառով: Դա վերաբերում է, մասնավորապես, Ադրբեջանին, որի վարած տնական լրատվական պատերազմն ընդդեմ Արցախի հանգեցրել է իր համար խիստ բացասական հետևանքների: Արդեն 20 տարի հայկական այս երկրամասը դուրս է գտնվում Ադրբեջանի վարչաքաղաքական ենթակայությունից, ավելին՝ փաստացի անկախ պետություն է և շարունակում է սերտորեն ինտեգրվել Հայաստանին՝ իրողություններ, որոնց դեմ այնքան ռեսուրսներ (այդ թվում՝ տեղեկատվական) է մսխել հակառակորդ պետությունը, և շարունակում է մսխել...նոր ձևերով ու ծավալներով:

Կանխատեսելով շարունակվող այդ արշավի անարդյունավետությունը և հերթական ծախողումը իր գլխավոր նպատակներում, այն է՝ միջազգային հանրությանը ետ պահել ԼՂՀ ճանաչումից, նրան համոզել Ադրբեջանի իրավացիության մեջ, ոգեզրկել հայությանն ու նրան տրամադրել զիջումների (պարտության), ընդգծենք միաժամանակ, որ որոշակի հաջողության հակառակ կողմը գերազանցաբար հասնում է դարձյալ և միայն սեփական դաշտում՝ հայրենի հանրությանը թունավորելով հայատյացությամբ, ազգային մոլեռանդությամբ համակելով քաղաքացիական որոշ խմբերի: Այս ուղղությամբ հակառակորդն արդեն ունի որոշակի ձեռքբերումներ. Ադրբեջանում ձևավորվել են ծայրահեղ ազգայնական առանձին միավորումներ (ինչպես, օրինակ, «Ղարաբաղի ազատագրության» կազմակերպությունը), որոնք շարունակաբար ձգտում են ադրբեջանական իշխանություններին ու հասարակությանը մղել ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ վճռական քայլերի՝ ռազմական գործողությունների, բանակցային գործընթացի տապալման, միջազգային սանկցիաների կազմակերպմանը և այլն: Ուստի ներկա իրավիճակը թելադրում է ձեռնարկել համարժեք միջոցներ՝ լավագույնս իմանալով տեղեկատվական ագրեսիայի իրական բնույթ ու այն վնասազերծելու մեթոդաբանությունը:

Ըստ փորձագետ Գագիկ Տեր-Հարությունյանի՝ ներկայումս ԼՂՀ-ի դեմ վարվում են առաջին և երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներ, որոնք արտահայտվում են նպատակաուղղված լրատվական հոսքերի ձևով: Փորձագետի սահմանմամբ՝ առաջին սերնդի մեջ մտնում է դասական տեղեկա-

տվական պատերազմը, «որը կոչված է լրացնելու այն գործողությունները, որոնք իրականացվում են Ադրբեջանի կողմից ռազմական, քաղաքական և տնտեսական ոլորտներում» (Գ. Տեր-Հարությունյան. «Տեղեկատվական պատերազմները և ԼՂՀ-ն», «Երկիր», 4 հուլիսի, 2008թ., N 51): Իսկ երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմները հանդես են գալիս որպես ռազմավարական հակամարտության սկզբունքորեն նոր տեսակ, որը կյանքի է կոչվում «տեղեկատվական հեղափոխությամբ, հակամարտության ոլորտների շրջանակ են մտցնում տեղեկատվական տարածությունը և ժամանակի մեջ ամիսներ ու տարիներ են տևում» (նույն տեղում):

Եթե առաջին սերնդի տեղեկատվական պատերազմի տիպաբանությունը հայտնի է (ադրբեջանցիներին դաստիարակել ռազմատենչության, ռևանշի, հայատյացության ոգով, ԼՂՀ-ի և հայկական այլ շրջանների նկատմամբ հավակնությունների ցուցադրում, հայկական ագրեսիայից «տուժած» Ադրբեջանի դրական իմիջի ձևավորում և այլն), ապա շատ ավելի հեռահար ու սուր խնդիրների են միտված երկրորդ սերնդի տեղեկատվական արշավները: Դրանք իրականացվում են ամերիկյան «ՌԷՆԴ» կորպորացիայի մասնագետների մշակած հայեցակարգով և, ի մասնավորի, ունեն այսպիսի ուղղություններ.

- Հասարակական գիտակցության մանիպուլյացիա՝ լարվածություն և քաոս ստեղծելու նպատակով:
- Քաղաքական ուժերի միջև պայքարի սրում՝ կոնֆլիկտներով ընդդիմության հանդեպ ճնշումների սադրում, փոխոչնչացման դրդում:
- Պետական մարմինների վարկաբեկում:
- Պետության միջազգային հեղինակազրկում, այլ երկրների հետ համագործակցության խափանում:

Նույնիսկ ոչ մասնագիտական աչքով տեսանելի է, որ ՀՀ-ն և ԼՂՀ-ն արդեն ենթարկվում են «երկրորդ կարգի» տեղեկատվական հարձակման: Եթե ՀՀ-ում դա արձանագրվում է անմիջական իրողություններով, ապա Արցախի հանդեպ այն արտահայտվում է միջնորդավորված՝ Հայաստանից եկող ալիքի ձևով: Վերոնշյալ հոդվածի հեղինակը տեղին նկատում է, որ 2008թ. Հայաստանում նախագահական ընտրությունների ժամանակ տեղի ունեցած զանգվածային անկարգությունները նաև տեղեկատվական ագրեսիայի հետևանք են և առնչություն ունեն ԼՂՀ անվտանգության հետ: Որոշ քաղաքական ուժեր օգտագործել են հակաղարաբաղյան կարգախոսներ, ինչպես, օրինակ՝ «Կորչի ղարաբաղյան կլանը», «Չկարգավորված ղարաբաղյան հակամարտությունը մեր բոլոր դժբախտությունների աղբյուրն է» և այլն: Նման գաղափարախոսությամբ մանիպուլացվել է հայ հասարակական գիտակցությունը, արժեզրկվել Ազատամարտում տարած վառ հաղթանակը, սասանվել ազգային միասնականությունը,

փորձ արվել՝ առանց նախապայմանների հանձնել ազատագրված տարածքները:

Տեղի ունեցածը պարզորոշ հուշում է, որ հայկական հանրության համար առավել վտանգավոր են իր հանդեպ կիրառվող «երկրորդ սերնդի» տեղեկատվական գործողությունները, ուստի հարկ է հանդես գալ կանխարգելիչ հեռահար ծրագրով, Արցախի և Հայաստանի տեղեկատվական անվտանգությունը դիտարկելով միասնական համատեքստում: Ընդ որում, այնտեղ կարևոր շեշտադրում պետք է ստանա նաև Սփյուռքի պարագան:

Այժմ տեսնենք, թե ներկայումս ԼՂՀ-ն ինչ «դասական» տեղեկատվական հարվածներ է ստանում Ադրբեջանից և ինչպես է հակադարձում դրանց: **Օպերատիվ լրատվաքարոզչական կռիվներ**՝ այսպես կարող ենք անվանել մեր ուսումնասիրության ներքոբերյալ հատվածը:

...Իր ամենօրյա լրատվագրոհների ժամանակ Ադրբեջանի քարոզչամեքենան մեծապես կիրառում է ապատեղեկատվության հնարքը, ապավինելով այն հին նկատառմանը, թե բազմիցս ասվող սուտը ճշմարտության տեղ անցնելու շանս ունի: Մասնագետների ձևակերպմամբ՝ «ապատեղեկատվության օգտագործումը նպաստում է հակառակորդ կողմին ապակողմնորոշելու ժամանակավոր, կոնկրետ իրավիճակում առավելություն ապահովելուն, ինչպես նաև ոչ ճիշտ և թերի որոշումների կայացմանը» (Ս. Մանուկյան, Ն. Մարտիրոսյան. «Տեղեկատվություն և ապատեղեկատվություն. տեղեկատվական պատերազմների ժամանակակից մեթոդները», «Ժուռնալիստկա. տեսության և պատմության հարցեր», պրակ Ժ, Երևան, ԵՊՀ հր., 2009թ., էջ 73):

Իրոք, խնամքով, խելացիորեն կազմված ապատեղեկատվությունը հակառակորդ ճամբարում կամ այլ հասցեատերերի շրջանակում հաճախ կատարում է իր «առաքելությունը», բայց, մեր դիտարկմամբ՝ շատ կարևոր է և այն հանգամանքը, թե ինչ աղբյուրից է դուրս գալիս այդ ապատեղեկատվությունը, ինչ վարկանիշ ու «քաղաքական բնութագիր» ունի հեղինակ-օբյեկտը: Այսպես, Ղարաբաղյան պատերազմի ժամանակ Ադրբեջանի գործիչները հաճախ էին իրենց լրատվական և այլ խողովակներով աղմուկ բարձրացնում, թե իբր պատերազմը սանձազերծվել է հայերի կողմից, իրենք ագրեսիայի զոհ են, իսկ Արցախի ու ՀՀ քաղաքացիներին հղված «լրատվական ուղերձներում» խոսում էին իրենց զինուժի հերթական խոշոր հաջողությունների, հայկական զորամիավորումների հերթական խոշոր կորուստների մասին: Նման կեղծ լուրերը հասցեագրվում էին նաև դրսի աշխարհին ու բուն ադրբեջանական լսարանին, սակայն այդ ուղղությամբ ևս, պատերազմի արդյունքներից դատելով, ապատեղեկատվական արշավը նրանց համար ցանկալի պտուղներ չի տվել:

Այսօր կարող ենք խոսել հակառակ արդյունքների մասին: Պատերազմի տարիներին, հատկապես սկզբնական փուլում, արցախյան կողմից ևս, ի

լուր աշխարհի, սփռվում էր ապատեղեկատվություն, որը հաճախ սպասված արձագանք էր գտնում միջազգային հանրության շրջանում: Խոսքը մասնավորապես այնպիսի կեղծ լուրերի մասին է, ուր հիշատակումներ էին արվում Ադրբեջանի զինուժի կողմից արցախյան խաղաղ բնակավայրերի շատ ավելի զանգվածային ռմբահարումների ու հրետակոծությունների, մարդկային մեծաքանակ զոհերի վերաբերյալ: Երբեմն չափազանցված տեղեկությունները որպես անկասկածելի ճշմարտություն էին ընդունում միջազգային կազմակերպություններն ու հանրության մեծամասնությունը, համոզված, որ ազատագրական պայքարի ելած փոքր երկրի համար օրինաչափ պետք է լինի անհավասար կռվում նման կորուստները:

Ներկա պահին, երբ զինադադար է ու հարաբերական խաղաղություն, ապատեղեկատվական հնարքն առանձնապես չի կիրառվում արցախյան լրատվամիջոցների կողմից: Դրա փոխարեն շատ եռանդուն է, նույնիսկ պատերազմական շրջանի համեմատ ավելի եռանդուն, ադրբեջանական քարոզչամեքենան: Եվ նրա հիմնական «երգն» է հրադադարի խախտումը հայկական (ղարաբաղյան) զինուժի կողմից: Գրեթե ամեն օր, կանոնակարգված ձևով, ադրբեջանական մի խումբ լրատվամիջոցներ (առաջին հերթին day.az, vesti.az, apa.az ինտերնետային կայքերը, «Зеркало», «Exo» թերթերը) հերթական «լուրերն» են մատուցում ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում հայ զինծառայողների բացած կրակահերթերի, առաջացած սահմանային լարումների մասին: Իսկ եթե, իրոք, տեղի են ունենում սահմանային բախումներ, ադրբեջանական քարոզչամեքենան չափազանց է ակտիվանում և բոլոր փաստերը ձևափոխում իր քաղաքական շահերին համահունչ: Մի օրինակով տեսնենք, թե ինչպես են գործում հակառակ կողմի լրատվամիջոցները, երբ «թեժ» դեպքեր են տեղի ունենում շփման գծում: Կատարվածին հետևենք երևանյան panorama.am ինտերնետային կայքի՝ խնամքով կազմած ժամանակագրությամբ:

2009թ. սեպտեմբերի 10-ին, ժամը 11.32-ին ադրբեջանական ԱՊԱ գործակալությունը տեղեկություն է հրապարակում, թե հայ-ադրբեջանական շփման գծում՝ Աղդամի ուղղությամբ հայերը հարձակման են անցել: «Թշնամու հարձակումը կասեցվել է, 5 հայ զինվոր սպանվել է, 3-ը՝ վիրավորվել»,- գրում է ԱՊԱ-ն և նշում, թե ադրբեջանական կողմից մեկ վիրավոր է եղել: Ադրբեջանական լրատվամիջոցը որևէ կոնկրետ աղբյուր չի վկայակոչում (հետագայում Ադրբեջանի ՊՆ-ն ընդհանրապես հրաժարվում է մեկնաբանել այս տեղեկությունը): ԱՊԱ գործակալությունը միջադեպի կոնկրետ ժամ չի նշում, մինչդեռ նրանից օգտված ՁԼՄ-ները հաղորդում են կոնկրետ ժամեր՝ ոմանք 9:23-ը, ոմանք՝ 9:00-ն: Հետագայում հակասություններ են նկատվում նաև ենթադրյալ զոհերի ու վիրավորների թվի հարցում: Այս ուշագրավ փաստն այն է, որ, առանց պաշտոնական հղումի, ադրբեջանական ՁԼՄ-ները հաղորդում են վի-

ռավոր ադրբեջանցու բոլոր տվյալները՝ ներառյալ զորակոչի հասցեն, մինչդեռ այդ տեղեկությունը բաց և հրապարակային չէ: Նույն տեղեկությունը անմիջապես հրապարակում են ադրբեջանական մյուս հայտնի էլեկտրոնային լրատվամիջոցները:

Սեպտեմբերի 10-ին, ժամը 13.16 ռոպեին Panorama.am-ը հրապարակում է ԼՂՀ ՊՆ մամլո քարտուղարի պաշտոնական հերքումը, որով տեղեկացվում է, որ հայ-ադրբեջանական շփման ողջ գծում միջադեպ չի գրանցվել: Միևնույն ժամանակ հայ զինվորականը տեղեկատվությունը բացատրում է որպես ադրբեջանական բանակում հնարավոր ոչ կանոնադրական հարաբերությունների հետևանքով գրանցված միջադեպը կոծկելու փորձ:

Այս հայտարարությունից անմիջապես հետո Ադրբեջանի ՊՆ-ն հանդես է գալիս հայտարարությամբ՝ տեղեկացնելով ադրբեջանական զինուժի բազաներից մեկում զինվորների միջև բախման, և դրա արդյունքում զինծառայողներից մեկի կողմից ծառայակից ընկերոջն անզգուշաբար վիրավորելու մասին: Ադրբեջանական ԶԼՄ-ներից ԼՂՀ ՊԲ պաշտոնական հերքումը հրապարակում է միայն «Թուրան» գործակալությունը՝ սեպտեմբերի 10-ին, ժամը 13:36-ին:

Այդ պահից ի վեր ադրբեջանական ԶԼՄ-ները դադարում են այս թեմայով տեղեկատվություն սփռել: Փոխարենը՝ ակնհայտ ապատեղեկությունը սկսում են տարածել օտարերկրյա ԶԼՄ-ները: Համապատասխան բովանդակությամբ տեղեկություն են հրապարակում «BBC»-ն, «Reuters»-ն և «Aljazeera»-ն: Ընդ որում՝ «ԲիԲիՍի»-ն ու «Ռոյթերզ»-ը հայտնում են հայկական կողմի 5 զոհերի, իսկ «Ալ Ջազիրա»-ն տեղեկացնում է ԼՂՀ ՊՆ հերքման և Ադրբեջանի ՊՆ-ի՝ մեկնաբանություններից հրաժարվելու մասին: «Ռոյթերզը» այս փաստերը չի հրապարակում:

Նույն օրը երեկոյան ժամը 19:35 «Վեստի.ազ» կայքը զետեղում է զոհվածների լուսանկարներ՝ «Զոհված հայ զինծառայողները» մակագրությամբ: Անմիջապես արձագանքում է Հայաստանի պաշտպանության նախարարությունը՝ հաղորդելով, որ տեղ գտած հրապարակումը կեղծիք է, լուսանկարում պատկերվածը 2008 թվականի ռուս-վրացական պատերազմի ժամանակ զոհված վրացի զինվոր է, իսկ լուսանկարը վերցված է www.kprf.ru կայքից:

Այս մերկացումից հետո «Վեստի.ազ» կայքը վիճահարույց հրապարակումը հանում է կայքից, սակայն հայկական ֆորումներից մեկը հասցնում է մինչ այդ արտատպել այն: Ադրբեջանական «Թուրան» գործակալությունը, անդրադառնալով վերը նշվածին, մտահոգություն է հայտնում տեղ գտած թյուրիմացության համար և պարզաբանում ստանալու նպատակով երկրորդ անգամ դիմում է Ադրբեջանի ՊՆ նախարարությանը: Այստեղ կրկին հրաժարվում են մեկնաբանություն անել, հրաժարվում են նաև գնահատական տալ ադրբեջանական ԶԼՄ-ների կազմակերպած ապատեղեկատվությանը: Այս

մասին հրապարակումը «Թուրանը» տարածում է սեպտեմբերի 11-ին, ժամը 13:25-ին: Ադրբեջանական և օտարերկրյա լրատվամիջոցները, որոնք տարածել էին կեղծ տեղեկություններ մտացածին միջադեպի մասին, որևէ հերքում կամ պարզաբանում չեն տարածել (Panorama.am, 12 սեպտեմբերի, 2009թ.):

Ներկայացված դրվագը բավական տիպական է ադրբեջանական քարոզչամեքենայի գործելաոճին. տարածել հերթական ապատեղեկատվությունը, դրան լծել առկա լրատվական ռեսուրսների գերակշիռ մասը և մի կողմ քաշվել՝ սպասելով արդյունքների: Իսկ արդյունքներ երբեմն լինում են, ինչպես վերոբերյալ դեպքում, երբ ադրբեջանական խայծը կուլ տվեցին արտասահմանյան ազդեցիկ լրատվամիջոցներից մի երկուսը և տպավորություն ստեղծվեց, թե ղարաբաղյան զինուժը, իբր, պարբերաբար խախտում է հրադադարը և «արժանի հակահարվածով» լուրջ կորուստներ կրում:

Միջադեպի վերաբերյալ ղարաբաղյան արձագանքը տիպականորեն ցույց է տվել ԼՂՀ լրատվամիջոցների վարքագիծը, այն է՝ առավել պասիվ-հայեցողական: Սփռված ապատեղեկատվությանը հակադարձել են միայն ԼՂՀ պաշտպանության և արտաքին գործերի նախարարությունների լրատվական ծառայությունները, որոնց մեկնաբանություններն են տեղական լրատվամիջոցներն ուշացումով տարածել, ընդամենը, չցուցաբերելով սեփական նախաձեռնողականություն:

Իսկ ադրբեջանական քարոզչամեքենան չափազանց ակտիվ է ոչ միայն շփման գծում տիրող փաստացի իրավիճակը տեղեկատվական խեղաթյուրման ենթարկելու գործում, այլև հոգեբանական ազդեցության ժանրի տարբերակով մշտապես հրապարակումներ է անում սոցիալական, տնտեսական, քաղաքական մշակութային և այլ թեմաներով՝ ձգտելով ապակողմնորոշել նախևառաջ արցախահայությանը, ապա և՝ ողջ հայ ժողովրդին՝ «կանխանշելով պարտություն իր պայքարում»: Նման հակաքարոզչության հանդեպ Արցախի բնակչությունը վաղուց ձեռք է բերել անհրաժեշտ բարոյական իմունիտետ և գործնականում այդ կարգի ելույթները տեսանելի բացասական հետևանքներ չեն թողնում արցախցիների մոտ: Սակայն դրանով բավարարվելը ճիշտ չենք համարում. հարկ է, որ ակտիվություն հանդես բերի արցախյան քարոզչությունը հատկապես այն դեպքում, երբ Բաքվից ռազմամոլական հերթական հռետորությունն է արձակվում Արցախի և Հայաստանի ուղղությամբ: Ադրբեջանը շարունակաբար սպառնում է նոր պատերազմով. տեղեկատվական նման հիստերիան պատասխան է պահանջում, և այն չպետք է թողնել միայն հայ ժողովրդի ողջամտությանն ու նրա տոկուն կեցվածքին: Արցախյան (հայկական) քարոզչամեքենան առանձնապես տվյալ հարցում լուրջ անելիքներ ունի: Իսկ երբ Բաքվի թունավոր սլաքն ուղղվում է Հայոց բանակը բարոյալքելուն, այս դեպքում հայկական քարոզչության գործը պետք է կրկնապատկվի:

Անգեն աչքով իսկ տեսանելի է, որ ներկայումս հայկական լրատվամիջոցները Ադրբեջանի դեմ վարում են առավելապես պաշտպանական տեղեկատվական պատերազմ, մինչդեռ անհրաժեշտ է անցնել հարձակողական գործողությունների: Հայ մասնագետների կարծիքով՝ դրանք պետք է կազմակերպել երեք կարևոր սկզբունքով. հակաքարոզչությամբ բարոյալքման հասցնել հակառակորդի զանգվածային լսարանը, նրան պարտադրել սեփական գաղափարները, հակառակորդ ճամբարում սերմանել անվստահություն սեփական ՁԼՄ-ների նկատմամբ: Այդ սկզբունքների արդյունավետ կիրառումով հնարավոր կլինի «նպատակային հակահարված հասցնել հակառակորդին և ... հաստատել տեղեկատվական գերակայություն» (Մուշեղ Հովսեփյան. «ՀՀ բանակը հայ-ադրբեջանական տեղեկատվական պատերազմների համապատկերում», նույն տեղում, էջ 103-104):

Ուշագրավ տեսակետ է առաջ քաշում ուկրաինացի փորձագետ Գեորգի Պոչեպցովը: Նա կողմնակից է «հումանիտարների» գործելաոճին՝ «պետք է ստեղծել սեփական ու բավականին ուժեղ «տեքստը» (իմա՝ գաղափարը) և այդ պարագայում ոչ մի կողմնակի միջամտություն կամ ինտերվենցիա սարսափելի չի լինի» («Պետք է ձևավորել սեփական ուժեղ «տեքստը», գաղափարը», «Հայոց աշխարհ», 14 նոյեմբերի, 2009թ., N215):

Միանգամից նկատենք, որ և՛ արցախյան, և՛ երևանյան լրատվամիջոցների մեծ մասը ինքնաբերաբար գործում է այդ սկզբունքով՝ դրա համար ունենալով անհրաժեշտ պատմաքաղաքական նյութ և բարոյական առավելություն:

Պաշտպանված տեղեկատվական միջավայր ունենալու խնդիրը մեծապես առնչվում է բուն հայկական լրատվամիջոցների կեցվածքին՝ առ հայոց իրողություններն ու ներազգային հարաբերությունները: «Հայկական լրատվամիջոցներում հաճախ հանդիպում են հակահայկական միտում ունեցող հոդվածներ, երբեմն վարկաբեկվում են մեր ազգային խառնվածքի դրական կողմերը» (Անահիտ Մենեմշյան. «Պաշտպանված տեղեկատվական միջավայր. ՀՀ տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներ», «Ժուռնալիստիկա. տեսության և պատմության հարցեր», պրակ Ժ, Երևան, ԵՊՀ հր., 2009թ., էջ 63):

Մեր կողմից նկատենք, որ ակնհայտորեն պառակտիչ ուղղվածությամբ հրապարակումներ են ի հայտ գալիս նաև «ղարաբաղյան թեքումով», երբ առանձին լրատվամիջոցներ ու լրագրողներ իրենց անթաքույց հակակրանքն ու մերժողականությունն են ի ցույց դնում Արցախի պետության, իշխանությունների, տարբեր անհատների հանդեպ, սովորական քննադատության քողի տակ փորձում արցախահայությանը տարանջատել հայկական միահյուս օրգանիզմից՝ այդ կերպ կամա թե ակամա միանալով հակառակորդի վարած հակահայ (հակաղարաբաղյան) քարոզչությանը: Արցախն առայժմ ՀՀ ամբողջ լրատվադաշտի կողմից չի ընկալվում որպես տեղեկատվական հուսալի պաշտպան-

վածության արժանի օբյեկտ, և սա բազմաթիվ հարցերից մեկն է, որ պետք է դիտարկել ազգային միասնական անվտանգության ընդհանուր տիրույթում:

Տեղեկատվական անվտանգության ապահովման ներկայիս փուլում արցախյան, ընդհանրապես հայկական լրատվամիջոցների համար չափազանց կարևոր է դարաբաղյան խնդրի արծարծումը իրավապատմական ճշգրիտ ձևակերպումներով: Դրանց շուրջ մերթ անմիջական, մերթ հեռակա-անուղղակի բանավեճ է ծավալվում հայկական մամուլում, և աստիճանաբար նկատելի է դառնում այն տեսակետի գերակշռությունը, որ հայաշխարհը պետք է լուրջ վերանայման ենթարկի Արցախյան հարցի եզրաբանությունն իր նկարագրական ու գծագրական բաղադրամասերով: Փորձագետներից շատերը հիմնավոր ձևով պնդում են, որ հրապարակային խոսքից պետք է դուրս թողնվեն այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «ազատագրված տարածքներ», «անվտանգության գոտի», «բուֆերային գոտի», «ԼՂՀ վերահսկողության տակ գտնվող տարածքներ», «վիճելի տարածքներ» և այլն: ԼՂՀ Սահմանադրությամբ այդ տարածքներն ամրագրված են որպես նորանկախ հանրապետության անբաժանների մաս, ուստի վիճարկման ենթակա չէ, իրոք, որ «գոյություն ունի միայն ԼՂՀ տարածք: Նման ձևակերպումները...կասկածի ստվեր են ձգում այդ տարածքների ներկայիս կարգավիճակի օրինականության վրա, միաժամանակ կարող են հայաշխարհի մոտ կեղծ պատկերացում ստեղծել այդ կարգավիճակի ժամանակավոր բնույթի մասին» (Դ.Բաբայան. «Տեղեկատվական անվտանգության տերմինաբանական կողմը», «Ազատ Արցախ», 2009թ., N137):

Թռուցիկ դիտարկումով իսկ փաստում ենք, որ անցանկալի-վնասակար ձևակերպումներ են առկա նաև գծագրական եզրաբանությունում: Ամենատարբեր լրատվամիջոցներ ԼՂՀ-ն հաճախ պատկերում են նախկին ԼՂԻՄ-ի սահմաններում, իսկ ներկայիս ԼՂՀ-ի տարածքը ներկայացվում է տարբեր գույներով՝ «ազատագրված տարածքների» առանձնանշմամբ:

Արցախյան խնդրի մեկնաբանություններում հայկական լրատվամիջոցները պետք է հանդես գան քաղաքական հեռանկարի թելադրած՝ հայանպաստ, նույնաբովանդակ ձևակերպումներով, իբրև տեղեկատվական անվտանգության կարևոր պահանջ: